ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.09.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/202

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

Ա/Ձ Գայանե Մելիքյանի (պետական գրանցման վկայական թիվ 01Ա926182),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 20.08.2020թ. թիվ 26/26-1/12448-2020 գրությամբ Ա/Ձ Գայանե Մելիքյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Եղվարդի Հ.Թադևոսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի՝ 17.08.2020թ. գրության հիման վրա, 20.08.2020թ. թիվ 26/26-1/12448-2020 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Գայանե Մելիքյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Գայանե Մելիքյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Գայանե Մելիքյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/202 ընթացակարգի շրջանակներում 04.09.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը և հայտնել հետևյալ դիրքորոշումը.

«Սույն թվականի հուլիսի 27-ին Ա/Ձ Գայանե Մելիքյանը մասնակցել է «Եղվարդի Հ.Թադևոսյանի անվան N2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԵՀԹԴ-ԳՀԱՇՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցմանը՝ իրականացնելու համար «Եղվարդի Հ.Թադևոսյանի անվան N2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մասնակի վերանորոգման աշխատանքներ:

Ա/Ձ Գայանե Մելիքյանը ս.թ. հուլիսի 30-ին ստացել է ծանուցում 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու մասին և հուլիսի 31-ին դիմել է բանկ՝ որակավորման ապահովման և պայմանագրի ապահովման բանկային երաշխիքներ ստանալու նպատակով:

Ա/Ձ Գայանե Մելիքյանը, երաշխիքների ստացման համար որպես գրավ բանկ է ներկայացրել 18.206.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով գնահատված գյուղատնտեսական նշանակության հողատարածքների փաստաթղթեր (կից ներկայացվում է), չնայած որ պայմանագրի ապահովման համար անհրաժեշտ բանկային երաշխիքի գումարն էր՝ մոտ 891.000 ՀՀ դրամ, որակավորման ապահովման համար՝ մոտ 8.910.000 ՀՀ դրամ, ընդհանուր մոտ 9.801.000 ՀՀ դրամ:

Սակայն, դիմելով մի քանի բանկի, պատասխան ենք ստացել, որ հողատարածքները նորից պետք է գնահատվեն այն կազմակերպությունների կողմից, որոնց հետ աշխատում են տվյալ բանկերը, ընթացակարգը կտևի մոտ մեկ ամիս»:

3. <u>«Եղվարդի Հ.Թադևոսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Եղվարդի Հ.Թադևոսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 17.08.2020թ. գրությամբ հայտնել է, որ իր կարիքների համար «ԵՀԹԴ-ԳՀԱՇՁԲ-20/3» ծածկագրով 20.07.2020թ.-ին

«Եղվարդի Հ.Թադևոսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մասնակի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Ա/Ձ Գայանե Մելիքյանը: Մասնակցին սահմանված ժամկետներում սույն թվականի հուլիսի 30-ին ծանուցվել է պայմանագրի նախագիծը և առաջարկվել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում՝ կնքվելիք պայմանագրի տասը տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի չափով:

Ա/Ձ Գայանե Մելիքյանը սահմանված ժամկետում չի ներկայացրել իր կողմից ստորագրված և կնքված պայմանագրի նախագիծը երկու օրինակից, ինչպես նաև պայմանագրի կատարման ապահովումը՝ կնքվելիք պայմանագրի տասը տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի չափով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով սույն ընթացակարգի շրջանակներում 04.09.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/202 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/202 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Եղվարդի Հ.Թադևոսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար «Եղվարդի Հ.Թադևոսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մասնակի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՀԹԴ-ԳՀԱՇՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Գայանե Մելիքյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.07.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով Ա/Ձ Գայանե Մելիքյանին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

3. Նույն արձանագրության 5.3 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել պայմանագիր կնքելու նպատակով անգործության ժամկետի ավարտից հետո Ա/Ձ Գայանե Մելիքյանին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի տասը տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի չափով:

4. Ա/Ձ Գայանե Մելիքյանին 30.07.2020թ. ծանուցվել է պայմանագրի նախագիծը, սակայն վերջինս սահմանված ժամկետում չի ներկայացրել իր կողմից ստորագրված և կնքված պայմանագրի նախագիծը երկու օրինակից, ինչպես նաև պայմանագրի կատարման ապահովումը՝ կնքվելիք պայմանագրի 10 /տասը/ տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի չափով և գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության՝ 20.08.2020թ. թիվ 26/26-1/12448-2020 գրությունը, «Եղվարդի Հ.Թադևոսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի՝ 17.08.2020թ. գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,</u>

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին:

Կարգի 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝

12) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

13) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, «Եղվարդի Հ.Թադևոսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար «Եղվարդի Հ.Թադևոսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մասնակի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՀԹԴ-ԳՀԱՇՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Գայանե Մելիքյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.07.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով Ա/Ձ Գայանե Մելիքյանին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Նույն արձանագրության 5.3 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել պայմանագիր կնքելու նպատակով անգործության ժամկետի ավարտից հետո Ա/Ձ Գայանե Մելիքյանին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի տասը տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի չափով:

Ա/Ձ Գայանե Մելիքյանին 30.07.2020թ. ծանուցվել է պայմանագրի նախագիծը, սակայն վերջինս սահմանված ժամկետում չի ներկայացրել իր կողմից ստորագրված և կնքված պայմանագրի նախագիծը երկու օրինակից, ինչպես նաև պայմանագրի կատարման ապահովումը՝ կնքվելիք պայմանագրի 10 /տասը/ տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի չափով և գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի 9.3-րդ և 9.4-րդ ենթակետերի համաձայն՝

9.3 Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ընդ որում շինարարական աշխատանքների գնման դեպքում պայմանագրում ներառվում են ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված սարքերը և սարքավորումները:

<u>9.4 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:</u> Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Ընդ որում ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը

հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է ընտրված մասնակցին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:</u>***

Այսպիսով՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանվում է հստակ ժամկետ պայմանագիրը ստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու համար, որոնք չպահպանելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

Այսպես՝ Գայանե Մելիքյանն իր կողմից ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է, որ ս.թ. հուլիսի 30-ին ստացել է ծանուցում 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու մասին և ***<u>հուլիսի 31-ին</u> դիմել է բանկ՝ որակավորման ապահովման և պայմանագրի ապահովման բանկային երաշխիքներ ստանալու նպատակով:***

Ա/Ձ Գայանե Մելիքյանը, երաշխիքների ստացման համար որպես գրավ բանկ է ներկայացրել 18.206.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով գնահատված գյուղատնտեսական նշանակության հողատարածքների փաստաթղթեր չնայած որ պայմանագրի ապահովման համար անհրաժեշտ բանկային երաշխիքի գումարն էր՝ մոտ 891.000 ՀՀ դրամ, որակավորման ապահովման համար՝ մոտ 8.910.000 ՀՀ դրամ, ընդհանուր մոտ 9.801.000 ՀՀ դրամ:

Որպես հիմնավորում վերոնշվածի Ա/Ձ Գայանե Մելիքյանի կողմից ներկայացվել է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Բանկ) գրությունը.

«Հայտնում ենք Ձեզ, որ «Գայանե Մելիքյան» Ա/Ձ-ն դիմել է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Աբովյան» մասնաճյուղ «Եղվարդի Հ. Թադևոսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման

N ԵՀԹԴ-ԳՀԱՇՁԲ-20/3 պայմանագրի շրջանակներում որակավորման ապահովման և պայմանագրի ապահովման բանկային երաշխիք ստանալու նպատակով: Դիմումների մեծաթիվ լինելու հանգամանքով պայմանավորված «Գայանե Մելիքյան» Ա/Ձ-ի կողմից դիմումը բանկի ներքին ընթացակարգերի համաձայն կքննարկվի մինչև 2020 թվականի օգոստոսի 21-ը»:

Այսպիսով՝ վերոգրյալի հաշվառմամբ արձանագրում եմ, որ չնայած այն հանգամանքին, որ Ա/Ձ Գայանե Մելիքյանը զրկվել է պայմանագիրը կնքելու իրավունքից, քանի որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները, այդուհանդերձ գտնում եմ, որ Ա/Ձ Գայանե Մելիքյանն Ընթացակարգի շրջանակներում դրսևորել է բարեխիղճ վարքագիծ, քանզի Բանկի ներքին ընթացակարգերի համաձայն և դիմումների մեծաթիվ լինելու հանգամանքով պայմանավորված Մասնակցի ներկայացրած դիմումի քննարկումը և համապատասխան երաշխիքի տրամադրումը հնարավոր չի եղել իրականացնել «ԵՀԹԴ-ԳՀԱՇՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով նախատեսված ժամկետում, ինչով և պայմանավորված՝ վերջինս իր կամքից անկախ հանգամանքներում զրկվել է սահմանված ժամկետում որակավորման և պայմանագրի ապահովումները Պատվիրատուին ներկայացնելու հնարավորությունից:

Նման պայմաններում գնահատելով վերոնշվածը՝ գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել Ա/Ձ Գայանե Մելիքյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.08.2020թ. թիվ 26/26-1/12448-2020 գրությամբ Ա/Ձ Գայանե Մելիքյանին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**